# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
# ՀՐԱՎԵՐԻ ՊԱՐԶԱԲԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2024 թվականի նոյեմբերի 22-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

## ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԾԱԾԿԱԳԻՐԸ «ԿԲՀ-ԴԱՊ-ԳՀԱՊՁԲ-24/15»

Շրջակա միջավայրի նախարարության «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կարիքների համար «Համակարգիչների» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԿԲՀ-ԴԱՊ-ԳՀԱՊՁԲ-24/15» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 2024 թվականի նոյեմբերի 21-ին ժամը 13:23-ին ստացված հարցադրումը և դրանց վերաբերյալ 2024 թվականի նոյեմբերի 22-ին ժամը 12:00-ին տրամադրված պարզաբանումը՝

**Հարցադրում N 1:** Հարգելի պատվիրատու,

ԿԲՀ-ԴԱՊ-ԳՀԱՊՁԲ-24/15 ծածկագրով գնման ընթացակարգի վերաբերյալ խնդրում եմ պարզաբանել հետևյալ հարցերը՝

1. Ընդունե՞լի է, եթե համակարգիչների գույնը սպիտակ չլինի
2. Ընդունե՞լի է, եթե համակարգիչը լինի 27” VA տիպի մատրիցայով մոնիտորով, որի պատճառով քաշը կլինի մոտավորապես 7,2կգ
3. Ընդունե՞լի է, եթե Bluetooth-ի վերսիան 5,3-ի փոխարեն լինի 5,2
4. Ընդունե՞լի է, եթե պրոցեսորը լինի i5-1235U

**Պարզաբանում N 1:** Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 3-րդ մասը, ինչպես նաև «ԿԲՀ-ԴԱՊ-ԳՀԱՊՁԲ-24/15» ծածկագրով հրավերի 1-ին մասի 3-րդ բաժնի 3.3 կետը՝ հանձնաժողովը գտնում է, որ հարցումը պարզաբանման ենթակա չէ և պարզաբանում չի տրամադրվում, քանի որ հարցումը դուրս է հրավերի բովանդակության շրջանակից կամ հարցումը վերաբերում է մասնակցի կողմից առաջարկվելիք ապրանքների տեխնիկական բնութագրերի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համարժեքության համապատասխանությանը: Հրավերի տեխնիկական բնութագրում հստակ նշված է թե ինչ տեխնիկական պարամետրերով համակարգիչ կարող եք առաջարկել:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ԿԲՀ-ԴԱՊ-ԳՀԱՊՁԲ-24/15» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ **Ա.Դիլանյանին**:

Հեռախոս՝ (+374) 268 2-71-71:
Էլեկտրանային փոստ՝ dilijannpgnumner@gmail.com:

«ԿԲՀ-ԴԱՊ-ԳՀԱՊՁԲ-24/16» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով